Համ Կդն Կից Գիշկուլցուրաց Գեբրագրուց
Խմբագրդ

ՖՈՒՏԲՈԼ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Թարգմ. Գ. ԱՐԱՑԱՆ

796
Ֆ-89

Պետական Հրատարակչություն. -- Երևան. 1930

06.09.2013

02 NOV 2010

Համ կԳԿ կԻՑ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ
ԽՈՐՀՈՒՐԴ

796
Ֆ-88

ՖՈՒՏԲՈԼ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Թարգմ. Պ. ԱԹԱՅԱՆ

17667

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ.—ԵԵՐԵՎԱՆ, 1930

9531

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՏ. ԵՎ ՄԱՏԵՆԱԳԻՏ. ՀԱՍ
ՀՍՍՌ ... ԳԻՏ.
Ա. ԻՄ. Ա. ՄԱՍՏՈՑԻ ԱՆՎ.
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
38203 ԱԼ

№ 1368։ Գրառեպվար № 5466 (բ)։ Տիրաժ 30

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում.
Պատվեր № 118։

8. Դ. (ցուցումներ դատավորներին) և
8. Խ. (ցուցումներ խմբակներին) —
կանոնների տեքստի շարունակությունն
են և պարտադիր են կատարման համար։

1. ԴԱՇՏԸ ՑԵՎ ՆՐԱ ՉԱՓԵՐԸ

Ֆուտբոլ խաղալու դաշտը մի ուղղանկյունի է՝ 90-ից մինչև 120 մետր յերկարությամբ և 45-ից մինչև 90 մետր լայնությամբ։

Միջազգային խաղերի ժամանակ դաշտը պետք է ունենա՝ 100-ից մինչև 110 մետր յերկարություն և 63-ից մինչև 73 մետր յայնություն։

8. Դ.[1] Դատավորը չպետք է թույլ տա խաղալու, յեթե դաշտի գետնի վիճակը վտանգավոր է խաղացողների համար, ըստ վորում վատ յեղանակի ժամանակ դատավորը պետք է վորոշի, թե գետնի վիճակը վորքան կարող է վնասել խաղացողներին, բայց և այնպես առանց հատուկ անհրաժեշտության խաղը չպետք է վերացնել։

8. Խ.[2] Դաշտի մակերևույթը պետք է հարթ լինի և, ըստ հնարավորին, խոտով ծածկված։ Սովորաբար դաշտի չափերն են՝ 105×70 մետր։

1. Ցուցումներ դատավորներին։
2. Ցուցումներ խմբակներին։

Պետք է ուշադրություն դարձնել, որպեսզի անկյունից խփելու ժամանակ բավականին տեղ լինի զուքաշելու համար։

2. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԳԾԱԳՐԵԼ ԴԱՇՏԸ

Դաշտն ամբողջովին պետք է սահմանափակել գծերով։ Կարճ գծերը կոչվում են — ճակատի, յերկարները կողքի գծեր։

Ճակատի և կողքի գծերը պետք է ուղիղ անկյուններ կազմեն։

Յուրաքանչյուր անկյան գագաթում պետք է տընկած լինի մի գրոշակ, որի ձողակը պետք է առնվազն 1 մ. 50 սմ. լինի, իսկ ծայրը սրած չպիտի լինի։ Յուրաքանչյուր անկյան գագաթից մեկ աղեղ է գծվում 1 մետր շառավիղով մինչև կողքի ու ճակատի գծերի հետ հատվելը. այդ աղեղի ներսից կատարվում է անկյունից տեղի ունեցող հարվածը։ Կողքի գծերի մեջտեղերը միացվում են ուղիղ գծով, որ կոչվում է «միջին»։

«Միջին գծի» մեջտեղն իրենից ներկայացնում է դաշտի կենտրոնը և պետք է պարզ նշանակած լինի։ Դաշտի կենտրոնից 9 մետր շառավիղով մի շրջան է գծվում։ Ճակատի գծերը պետք է տնցնեն դարպասների յերկայնությամբ։ Դաշտի վրա յեղած բոլոր գծերը պետք է 5-ից մինչև 10 սմ յայնությամբ լինեն, դաշտի մակերևույթի հետ մի հարթության վրա դանվեն և չի կարելի փոքր ակոսներով նշանակել։

8. Դ. Դատավորը չպետք է թույլատրի չգծած դաշտի վրա խաղալը։

Դատավորը չպետք է դաշտի վրա 4 գրոշակից ավելի թույլատրի։

Դատավորը չպետք է թույլատրի, որ անկյունների գրոշակները հանեն կամ կտրեն անկյունից հարված տալու համար։

8. Ե. Դաշտի գծագրումը պետք է կատարել վառ, դաշտի գետնի գույնից տարբերվող ներկով, գերազանցելի յե սպիտակ գույնով, կամ փայտի թեփով, կրով, կավիճով, ավազով, բայց վոչ մի դեպքում՝ փայտե ձողերով կամ քարերով։ Բոլոր կողմնակի առարկաները պետք է հեռացնել ճակատի գծերից՝ առնվազն 4 մետր և կողքի գծերից՝ առնվազն 2 մետր։

3. ԴԱՐՊԱՍՆԵՐ

Ճակատի գծերի վրա անկյուններից հավասար հեռավորությունների վրա դարպասներ են դրվում, որոնք բաղկացած են 2 մութակից, ճակատի գծերի վրա ուղղահայաց կերպով տնկած, մեկը մյուսից 7 մ 32 սմ վրա, և հեծանից, որ տեղավորված է մութակների վրա։ գետնից 2 մ 44 սմ բարձրության վրա։ Մութակներն ու հեծանը պետք է պատրաստած լինեն փայտից, ուղղանկյունի հատված ունենան, իսկ լայնությունն ու հաստությունը 12 սմ ավելի չպիտի լինի։ Հեծանի տեղը չի կարելի պարան, ժապավեն կապել և առհասարակ հեծանը չպետք է կռանա։ Ճակատի գծի այն մասը, որն անցնում է դարպասի յերկարությամբ, կոչվում է «դարպասի գիծ»։

8. Դ. Դատավորը չպետք է թույլ տա, որ

խաղացողները դիտավորյալ կերպով դեպի ներքև կռացնեն դարպասի հեծանը. մեղավորներին նախազգուշացում է արվում, իսկ այդպիսի վարմունքը կրկնվելու դեպքում, մեղավորին պետք է հեռացնել դաշտից։

3. Խ. Դարպասը պետք է ներկած լինի բաց պայծառ գույնով և պարանե ցանց ունենա, վորն ամրացվում է գետնին ճակատի գծից 1,5 մ վրա։ Առջևի մութակներին զուգահեռական յետևի մութակներ տնկելը, ցանցը պահելու համար, արգելվում է։

4. ԴԱՐՊԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԸ

Դարպասի մութակներից 5 մ 50 սմ հեռավորության վրա ճակատի գծին ուղղահայաց յերկու գիծ են քաշում, 5 մ 50 սմ յերկարությամբ։ Այդ գծերի ծայրերը միացվում են ուղիղ գծով, ճակատի գծին զուգահեռական։ Այսպես ստացված ուղղանկյունին կոչվում է «դարպասի մակերես»։

5. ՏՈՒԳԱՆՔԻ ՄԱԿԵՐԵՍԸ

Նույն ձևով, դարպասի մութակներից 16 մ 50 սմ հեռավորության վրա յերկու ուրիշ գիծ են քաշում 16 մ 50 սմ յերկարությամբ, վորոնց ծայրերը միացվում են ուղիղ գծով, կազմելով մի ուղղանկյունի, վոր կոչվում է «տուգանքի մակերես»։ Տուգանքի մակերեսում դարպասի մեջտեղից 11 մետր հեռավորության վրա նշան է արվում, վորտեղից կատարվում է տասնմեկ մետրանոց հարվածը։

8. Դ. Դատավորը չպետք է թույլ տա խաղալու, յեթե տուգանքի մակերեսը չի նշանակված։

6. ԳՆԴԱԿ

Գնդակը պետք է գնդաձև լինի և խաղի սկզբից առաջ նրա դրսի շրջագիծը պետք է 68-ից մինչև 70 սմ լինի։ Գնդակի քաշը խաղի սկզբից առաջ պետք է 370-ից մինչև 425 գրամ լինի։ Գնդակի դրսի շապիկը կաշուց են պատրաստում։

8. Դ. Խաղն սկսելուց առաջ դատավորը պետք է համոզվի, արդյոք համապատասխանում է գնդակը կանոններին։

8. Խ. Գնդակը տալիս է այն խմբակը, վորը դաշտի տերն է հանդիսանում։ Պետք է ունենալ պահունի, խաղի համար պատրաստի գնդակ։

7. ԽԱՂԱՑՈՂՆԵՐԻ ՎՈՏՆԱՄԱՆՆԵՐԸ

Խաղացողների վոտնամանները չպետք է վորևե դուրս ցցված մետաղե, թեկուզ և յերեսով կաշի քաշած մասեր ունենան, ըստ վորում ներբանների վրայի մեխերի գլուխները պետք է խփած, հավասարեցրած լինեն կաշվի հետ։ Ներբանների վրայի գզեռները պետք է պատրաստած լինեն կաշվից, կլոր կամ հարթ լինեն, առնվազն 1,25 սմ տրամագծով և 1,25 սմ-ից բարձր չպիտի լինեն. այդ գզեռների ծայրերը սրած չպիտի լինեն։ Ներբանների վրայի շերտերը պետք է կպցրած լինեն ներբանի ամբողջ լայնությամբ և պետք է լինեն 1,25 սմ-ից վոչ նեղ և վոչ էլ բարձր։

Գզեռների ու շերտերի համար պինդ գուտապերչ կամ մետաղ գործածելն արգելվում է։ Թույլատրվում է կակուղ ռետին գործածել և թաթերի ծայրերի տակին կխակլոր գզեռներ շինել։ Յուրաքանչյուր խաղացող, վորի վոտնամանները չեն համապատասխանում կանոններին, հեռացվում է դաշտից, վոտնամանները փոխելու համար։

Ց. Դ. Դատավորն իրավունք ունի խաղն սկսելուց առաջ զննել խաղացողների վոտնամանները։ Դատավորը պետք է հեռացնի դաշտից վոտնամանները փոխելու համար այն խաղացողին, վորի վոտնամանները խաղի ընթացքում պարզվել է, վոր կանոններին չեն համապատասխանում։

Ց. Խ. Խաղացողները պետք է հետևեն, վոր վոտնամանները համապատասխան լինեն կանոններին, հիշելով, վոր վոտնամանների թերությունների համար նրանց կարելի չէ հեռացնել դաշտից։ Չպետք է մոռանալ, վոր գզեռները մաշվում են և մեխերը դուրս են ցցվում։

8. ԽԱՂԱՑՈՂՆԵՐ

Խաղին մասնակցում են յերկու խումբ, յուրաքանչյուրը 11 հոգուց բաղկացած։ Խաղն սկսելու ժամանակ յուրաքանչյուր խումբը պետք է բաղկացած լինի առնվազն 8 հոգուց, ըստ վորում, յեթե խաղն սկսելուց հետո խումբը մնա 8 հոգուց պակաս կազմով, խաղը դադարեցվում է։ Խաղն սկսելուց հետո, բժշկի կամ դատավորի կողմից հաստատված դժբախտ պատահարի պատճառով խաղից դուրս յեկած խաղացողին կարելի չէ փոխարինել մի ուրիշ խաղացողով։ Փոխարինված խաղացողների ընդհանուր թիվը 3 հոգուց ավելի չպիտի լինի։

Պակասող խաղացողը կարող է խաղի մեջ մտնել ամեն մի ժամանակ, յերբ գնդակը դուրս է յեկել խաղից կամ խաղն ընդհատված է յեղել, անձամբ հայտնելով այդ մասին դատավորին։ Խաղից դուրս յեկող խաղացողը պետք է դրա համար դատավորից թույլտվություն ստանա։ Դաշտից պատժի ձևով հեռացված խաղացողին չի կարելի փոխարինել մի ուրիշ խաղացողով։

Ց. Դ. Դատավորը կարող է մերժել խաղացողին դաշտից հեռանալու թույլտվություն տալու, յեթե նա համոզված է, վոր այդ անհրաժեշտ է։

Դաշտից ինքնակամ հեռացած խաղացողին նորից խաղին մասնակցելու չի թույլատրվում։

Ց. Խ. Յեթե խաղացողն ակնհայտ կերպով վնասված է, նա կարող է դաշտից հեռանալ առանց դատավորի թույլտվության։ Խաղացողները պետք է հիշեն, վոր խաղն սկսելիս նրանք պարտավոր են դատավորին հայտնել, իսկ խաղից դուրս գալու համար պետք է խնդրեն նրա թույլտվությունը։

9. ԴԱՐՊԱՍԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Խաղն սկսելուց առաջ դատավորը վիճակահանություն է կատարում դարպասի ընտրության կամ սկզբնական (առաջին) հարվածի իրավունք ստանալու համար։

8. Դ. Դատավորին հանձնարարվում է նկատել, թե վոր խումբն է առաջին սկզբնական հարվածը տվել։

10. ԽԱՂԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Պաշտոնական խաղը շարունակվում է 90 րոպե, վոր բաժանվում է յերկու հավասար մասի, յուրաքանչյուրը 45-ական րոպե։ Յեթե մրցակցության խաղարկության պայմանը պահանջում է, վոր խաղը վորոշ հետևանք տա, վորը հնարավոր չի յեղել 90 րոպեի ընթացքում ստանալու, լրացուցիչ ժամանակ է տրվում հետևյալ հաշվով. 10 րոպե ընդմիջում է տրվում, վորից հետո խմբերը խաղում են ևս 30 րոպե, յերկու հավասար մասի բաժանած, յուրաքանչյուրը 15-ական րոպե, ըստ վորում առաջին 15 րոպեից առաջ վիճակ են գցում դարպասի ընտրության կամ սկզբնական հարվածը տալու համար, իսկ յերկրորդ 15 րոպեից առաջ, առանց ընդհատման կատարվում է դարպասների փոխանակումը։ Դարպասները փոխելուց հետո, սկզբնական հարվածը տալիս է այն խումբը, վորն ընտրել է դարպասը լրացուցիչ ժամանակի սկզբում։ Յեթե խաղն այնուամենայնիվ վերջանում է վոչվոքի, այդ դեպքում խաղը շարունակվում է մինչև առաջին ներս խփած գնդակը, բայց 15 րոպեից վոչ ավելի։ Սկզբնական հարվածի իրավունքը կամ կողմի ընտրությունը վորոշվում է վիճակահանությամբ։ Հետևանք չստանալու դեպքում, խաղը դադարեցվում է, վորի մասին դատավորը հայտնում է համապատասխան որդանին ի գիտություն։

8. Դ. Յեթե խաղը վորևե պատճառով ընդհատված է յեղել, այդ դեպքում դատավորը 90 րոպեին ավելացնում է այն ժամանակը, վորը կորել է ընդհատման ժամանակ։ Ժամանակի ավելացումը տեղի չի ունենում խաղի այն կիսում, վորի ժամանակ յեղել է ընդհատումը։ Գնդակի նորմալ կերպով խաղից դուրս գալը, ներքևում բերված կանոնների համաձայն, խաղի ընդհատում չի համարվում։ Խաղի ընդհատումը կարելի չի թույլատրել դժբախտ պատահարի, գնդակի փչանալու, հանդիսականների խաղին խառնվելու պատճառով և այն բոլոր դեպքերում, յերբ անհրաժեշտ է լինում վերացնել խաղի նորմալ ընթացքը խանգարող ժամանակավոր արգելքը։ Յեթե դատավորն ավելացնում է ընդհատման ժամանակ կորցրած ժամանակը, ցանկալի չի, վոր նա նախազգուշացնի այդ մասին խմբերի կապիտաններին։

8. Դ. Խմբակներում դատավորի համար ճիշտ ժամացույց պիտի լինի։

11. ԸՆԴՀԱՏՈՒՄ ՅԵՎ ԿՈՂՄԵՐԻ ՓՈՓՈԽՈՒՄ

45 րոպե անցնելուց հետո ընդմիջում է տրվում 10 րոպեից վոչ ավելի տևողությամբ, վորից հետո խմբերը փոխում են իրենց հատկացված տեղերը։ Ընդմիջումից հետո սկզբնական հարվածը տալիս է այն խումբը, վորը հակառակորդ է հանդիսանում խաղի սկզբում հարված տվող խմբին։ Դատավորն իրավունք չունի խաղն առանց ընդմիջումի անցկացնել։

12. ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՐՎԱԾ

Խաղն սկսվում է հարված տալով դաշտի կենտրոնում անշարժ դրած գնդակին հակառակորդի ճակատի գծի ուղղությամբ։ Հակառակորդներն իրավունք չունեն գնդակին մոտենալու 9 մետրից պակաս, մինչև վոր առաջին հարվածը չի տրված, և մինչև առաջին հարվածի մոմենտը վոչ մի խաղացող չպետք է անցնի միջին գիծը հակառակորդի դարպասի ուղղությամբ։ Գնդակը խաղի մեջ է համարվում այն ժամանակ, յերբ նա մի լրիվ շրջան է արել, այսինքն գլորվել կամ թռել է առնվազն 70 սմ հեռավորություն (գնդակի շրջագծի յերկարությունը)։ Սկզբնական հարվածից անմիջապես դարպասը մտած գնդակը չի հաշվում։ Յեթե սկզբնական հարված տալը չի համապատասխանում այս կանոններին, հարվածը կրկնվում է։ Ամեն անգամ, յերբ քաղաքը վերցված է յեղել (յերբ դատավորը գնդակը դարպասի միջով անցած է հաշվել), տարված խումբը տալիս է սկզբնական հարվածը այս կանոնների համաձայն։

8. Դ. Դատավորն սկսում է ժամանակը հաշվել խաղի յուրաքանչյուր կիսում առաջին սկզբնական հարվածը տալու մոմենտից։ Անհրաժեշտ է հիշել, վոր այս կանոնը խախտելու դեպքում, հակառակորդներին ազատ հարված չի տրվում։ Այս կանոնը դիտավորյալ կերպով խախտելու դեպքում, մեղավորին նախազգուշացում է արվում, իսկ կրկնվելու դեպքում, նա հեռացվում է դաշտից։

8. Խ. Շատ խաղացողներ շրջանի մեջ են մըտնում կամ անցնում են միջին գիծը սուլիչից անմիջապես հետո։ Այդ ճիշտ չէ, վորովհետև խաղն սկսվում է հարված տալուց ու վոչ թե դատավորի սուլիչից։

13. ԻՆՉՊԵՍ Է ՎԵՐՑՎՈՒՄ ՔԱՂԱՔԸ (ԴԱՐՊԱՍԸ)

Քաղաքը վերցված է համարվում, յեթե ամբողջ գնդակը միանգամայն անցել է դարպասի գծով, մութակների միջև ու հեծանի տակով, միայն թե հարձակվող կողմի ձեռքերով ներս նետված, խփած, շարժած կամ ներս բերած չլինի։ Խաղը տարած է հաշվում այն խմբի կողմից, վորի ոգտին դատավորը նշանակել է ավելի մեծ քանակությամբ ներս խփած գնդակներ։ Յեթե խաղի ժամանակ հեծանը վորևե պատճառով տեղահան է յեղել, դատավորը կարող է գնդակը ներս խփած հաշվել, յեթե նա համոզված է, վոր գնդակը կանցներ հեծանի տակով, յեթե վերջինս կանոնավոր դրությամբ լիներ։

8. Դ. Դատավորը վոչ մի դեպքում չպետք է գնդակը դարպասով անցած համարե՝ յեթե նա դրանում հաստատ համոզված չէ։ Գնդակը ձեռքով ներս նետելու արգելումը վերաբերում է նաև այն դեպքին, յերբ գնդակը ձեռքով նետում են կողքի գծից ուղղակի դարպասի ներսը։ Հնարավոր է, վոր գնդակն իր մեծ մասով դարպասի գիծն անցած լինի, բայց այդ դեռ չի նշանակում, վոր նա անցել է դարպասը։ Պատահում է, վոր դարպասապահը ձեռքով գնդակը դուրս նետելիս, ձեռքը խփելու նպատակով յետ տարած ժամա-

նակ, գնդակն արդեն անցնում է դարպասի գծից. յեթե դատավորը պարզ տեսել է, որ ամբողջ գնդակը յեղել է գծի յետևում, նա պետք է գնդակը ներս խփած հաշվի. նույնը պետք է տեղի ունենա այն ժամանակ, յերբ դարպասապահը բռնել է գնդակը, ինքը դարպասում այնքան խորը գտնվելով, որ գնդակն ամբողջովին յեղել է դարպասի գծի յետևում։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ դատավորը յերբեք չպետք է վճռի մեղավորի ոգտին, նա պետք է քաղաքը վերցրած համարի այն դեպքում, յեթե գնդակը միանգամից անցել է դարպասը այն ժամանակ, յերբ պաշտպանվողներից մեկը ձեռքով նրան դիպել կամ կոպիտ կերպով խաղացել է։ Այստեղ տուգանային հարված նշանակելը կլիներ պաշտպանվողների ոգտին։ Այդպիսի դեպքերում դատավորը շատ զգուշ պիտի լինի և, յեթե նա հաստատ համոզված է, որ նրա սուլիչը՝ կոպիտ խաղի կամ ձեռքով խաղալու առթիվ պաշտպանվողներին ստիպել է պաշտպանությունը դադարեցնելու, այդ դեպքում նա պետք է գնդակը ներս խփած համարի։ Միմիայն այն դեպքում, յերբ սուլիչը, նրա կարծիքով, չի կարողացել պաշտպանության վրա ազդելու, և գնդակը, չնայած կոպիտ խաղին կամ ձեռքով խաղալուն, նույնպես և յետ խփելու փորձին, անցել է դարպասի ներսը, գնդակը պետք է ներս խփած համարել։ Դատավորը հատկապես ուշադիր պիտի լինի դարպասի մոտ իրար բռնվելու ժամանակ։

Դատավորի վճիռը ներս խփած գնդակի նկատմամբ անհակաճառելի է։

8. Խ. Դարպասի գիծը պարզ նշանակած, իսկ դարպասի հեծանը լավ ամրացրած պիտի լինեն։

14. ԳՆԴԱԿԸ ԽԱՂԻՑ ԴՈՒՐՍ Է ԳԱԼԻՍ

Գնդակը խաղից դուրս է գալիս, յեթե նա ամբողջովին կտրել անցել է ճակատի կամ կողքի գիծը գետնի վրա կամ ոդի մեջ։

Գնդակը խաղի մեջ է մնում, յեթե նա յետ է թռչում դեպի դաշտը դարպասի մուրթակներից կամ հեծանից, կամ դրոշակի կոթից, նույնպես և յեթե նա դիպչում է դատավորին կամ գծերի վրայի դատավորներին, յերբ նրանք գտնվում են դաշտի սահմաններում։

8. Դ. Յեթե գնդակը թռել անցել է գիծը, բայց քամու պատճառով վերադարձել դաշտը, այդ դեպքում նա խաղից դուրս յեկած է համարվում։ Յեթե գնդակը դիպել է դատավորին կամ գծերի վրայի դատավորներին, նա խաղի մեջ է համարվում, յեթե նույնիսկ առանց այդ դիպչելուն նա դուրս պիտի թռչեր դաշտի սահմաններից։ Յեթե գնդակը դիպչի դատավորին կամ գծերի վրայի դատավորներին, որոնք գտնվում են դաշտի սահմաններում, իսկ հետո դուրս թռչի գծի յետևը, նա խաղից դուրս բերված է համարվում այն խաղացողի կողմից, որը վերջինն է խփել գնդակին։

8. Խ. Դատավորից դարպասի միջով անցած գնդակը հաշվի չի առնվում։

15. ԳՆԴԱԿԸ ՆԵՐՍ ՆԵՏԵԼԸ

Յեթե գնդակը խաղից դուրս է գալիս, կտրելով կողքի գիծը, գնդակը խաղից դուրս գցող խմբին հա-

կառակ խմբի խաղացողը նրան խաղի մեջ է դնում, գնդակը ձեռքերով դաշտի ներսը նետելով այն տեղից, որտեղ գնդակը կարել անցել է կողքի գիծը։ Գնդակը ներս նետող խաղացողը պետք է յերկու վոտով գետնի վրա կանգնի կողքի գծի յետևում, յերեսը դեպի խաղի դաշտը և գնդակը պետք է նետի յերկու ձեռքով իր գլխի յետևից։ Գնդակը կարելի չե ներս նետել ամեն մի ուղղությամբ և խաղի մեջ է համավում այն մոմենտից, յերբ նա բաժանվել է գնդակը նետող խաղացողի ձեռքերից և կարել է կողքի գիծն ոդի մեջ։ Այդպիսի նետումից անմիջապես դարպասով անցած գնդակով չի կարելի քաղաքը վերցնել, և գնդակը ներս նետող խաղացողն իրավունք չունի կրկին անգամ գնդակին դիպչելու, մինչև վոր մի ուրիշ խաղացող նրան չդիպչի։

8. Դ. Դատավորը չպետք է սուլի գնդակը ներս ձգելուց առաջ, բայց պետք է հետևի, վոր գնդակի ներս նետումը կանոնավոր կերպով կատարվի։ Անկանոնությունները հետևյալն են լինում. խաղացողը ներս նետելու ժամանակ յերկու վոտների վորևե մասով չի դիպչում գետնին կողքի գծի յետևում, խաղացողը նետում է գնդակը վոչ գլխի յետևից, խաղացողը նետում է գնդակը մի ձեռքով, իսկ մյուսով միայն պահում է գնդակը, խաղացողը չի նետում, այլ միայն բաց է թողնում գնդակը ձեռքից, խաղացողը յերեսը դեպի դաշտը չի կանգնած։ Գծերի վրայի դատավորները պետք է շարունակ գտնվեն, վորքան հնարավոր է, գնդակի գծին ավելի մոտ, առանց խաղի դաշտը մտնելու։ Նրանք պետք է ցույց տան այն տեղը, վորտեղից պետք է գնդակը նետել։

8. Ե. Խաղացողները չպետք է սպասեն դատավորի սուլիչին, վորպեսզի գնդակը նետեն։

16. ԴԱՐՊԱՍԻՑ ՀԱՐՎԱԾ ՏԱԼԸ

Յեթե գնդակը խաղից դուրս է գալիս, ճակատի գիծը կտրելով, հարձակվող խմբի խաղացողի հարվածից, նա խաղի մեջ է մտցվում պաշտպանվող խմբի խաղացողներից մեկի կողմից «դարպասից հարված տալով», վորտեղ յե ունենում ներքոհիշյալի համաձայն։ Գնդակը դրվում է դարպասի մակերեսում նրա այն կիսում, վորը մոտ է գնդակը խաղից դուրս գալու տեղին։ Խաղացողը գնդակին հարված է տալիս դատավորի սուլիչի համեմատ ամեն մի ցանկացած ուղղությամբ և իրավունք չունի կրկին անգամ գնդակին դիպչել, մինչև վոր նրան մի ուրիշ խաղացող չդիպչի։ «Դարպասից տված հարվածից» անմիջապես վերցված քաղաքը հաշվի չի առնվում։ Հակառակ խմբի խաղացողները չեն կարող գնդակին մոտենալ 9 մետրից ավելի մոտ, մինչև վոր հարվածը տրված չլինի։ Գնդակը խաղի մեջ է մտնում, յերբ նա մի լրիվ պտույտ է անում, այսինքն թռչում կամ անցնում է գետնի վրայով այն հեռավորությունը, վորը հավասար է նրա շրջագծին, այսինքն մոտ 70 սմ։

8. Դ. Դատավորը սուլիչ է տալիս, յերբ գնդակը յե հարված տալ։ Յեթե հարվածը [illegible] առաջ է տրված, հարվածը կրկնվում է։ Դատավորը պետք է հետևի, վորպեսզի հարվածը տեղի ունենա դարպասի մակերեսի հրամայատասխան կիսից։

(17664) 38203.12
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ГОС. БИБЛИОТЕКА ՀՍՍՀ-ում ՀՍՍՀ Կ. Մարքսի անվան պետական գրադարան
ՀՍՍՀ-ում ՀՍՍՀ Կ. Մարքսի անվան պետական գրադարան

Ց. Խ. Հակառակ խմբի խաղացողները պետք է կանգնեն գնդակից 9 մետրից վոչ պակաս հեռավորության վրա։

17. ԱՆԿՅՈՒՆԻՑ ՀԱՐՎԱԾ ՏԱԼԸ

Յեթե գնդակը խաղից դուրս է գալիս, կտրելով ճակատի գիծը, պաշտպանվող խմբի խաղացողի հարվածից, նա խաղի մեջ է մտցվում հարձակվող խմբի խաղացողներից մեկի կողմից «անկյունից տրված հարվածով» կամ «անկյունային հարվածով», վոր տեղի չե ունենում ներքոհիշյալի համաձայն. գնդակը դրվում է վորևե կետում այն աղեղի ներսում, վոր գծված է գնդակը դուրս գալու տեղին մոտ անկյունային դրոշակի շուրջը. խաղացողը գնդակին հարված է տալիս դատավորի սուլիչից հետո ամեն մի ցանկացած ուղղությամբ և իրավունք չունի գնդակին կրկին անգամ դիպչել, մինչև վոր նրան մի ուրիշ խաղացող չդիպչի։ «Անկյունից տրված հարվածով» անմիջապես վերցված քաղաքը հաշվի չե առնվում։ Հարված տվողի հակառակորդները չեն կարող գնդակին 9 մետրից ավելի մոտենալ, մինչև վոր հարվածը տրված չլինի։ Գնդակը խաղի մեջ է մտնում, յերբ նա մի լրիվ պտույտ է անում, այսինքն թռչում կամ անցնում է գետնի վրայով այն հեռավորությունը, վորը հավասար է նրա շրջագծին, այսինքն մոտ 70 սմ։

Ց. Դ. Դատավորը սուլիչ է տալիս, յերբ կարելի չե անկյունային հարված տալ. յեթե հարվածը սուլիչից առաջ է տրվել, հարվածը կրկնվում է։ Դատավորը հետևում է, վորպեսզի անկյունային հարվածն անկյունային սեկտորի սահմաններից տրվի և վորպեսզի անկյունային դրոշակը չկոցվի, չհանվի ու չտեղափոխվի։

Ց. Խ. Հարված տվողի հակառակորդները չեն կարող կանգնել գնդակից 9 մետրից պակաս հեռավորության վրա։ Անկյունային աղեղները պարզ գծած պիտի լինեն։

18. ՎԻՃԵԼԻ ՀԱՐՎԱԾ

Յեթե խաղը վորևե պատճառով ընդհատված է յեղել, իսկ գնդակը խաղից դուրս չի յեկել կողքի կամ ճակատի գծի վրայով, գնդակը խաղի մեջ է մտցնում դատավորը, վորը «վիճելի հարված» է տալիս ներքոհիշյալի համաձայն. դատավորը, գնդակը վերցնելով ուսերի բարձրության վրա պարզած ձեռքերով, իջեցնում է գնդակը գետնի վրա դաշտի այն կետում, վորտեղ նա յեղել է, յերբ խաղն ընդհատվել է։ Գնդակը խաղի մեջ է մտնում այն ժամանակ, յերբ նա հենց դիպել է գետնին, ըստ վորում, յեթե գնդակը դուրս է յեկել դաշտի սահմաններից, նախ քան խաղացողներից մեկը նրան դիպչելը, հարվածը պետք է կրկնվի։ Խաղացողներն իրավունք չունեն գնդակին դիպչել, մինչև վոր նա գետնին չդիպչի։ Վիճելի հարվածը տեղի չե ունենում, անկախ գնդակի դանվելու տեղից խաղի ընդհատման մոմենտին։

Ց. Դ. Յեթե խաղը վորևե պատճառով ընդհատված է յեղել և նրա վերսկսելու համար չի կարելի աղատ, տուգանային, տասնմետր նոց, անկյունային, սկզբնական կամ դարպասից

հարված տալ, գնդակը խաղի մեջ է մտցվում վերոհիշյալ յեղանակով։

19. ԽԱՂԻՑ ԴՈՒՐՍ

Ամեն մի խաղացող, դաշտի ուրիշի կիսում ու գնդակի առջևում գտնվելիս այն ժամանակ, յերբ գնդակին հարված է տալիս իր խմբի խաղացողը, իսկ իրեն և ուրիշի ճակատի գծի միջև յերկու հակառակորդ չկա, համարվում է «խաղից դուրս» և իրավունք չունի գնդակին դիպչել, հակառակորդին խանգարել և առհասարակ վորևե կերպ խաղին միջամտել։

Կանոնների խախտում չկա, յեթե խաղացողը գտնվում է «խաղից դուրս» դրությամբ, բայց խաղին վոչ մի կերպ չի մասնակցում, իսկ կանոնը խախտվում է միմիայն այն ժամանակ, յերբ նա վորևե կերպ միջամտում է խաղին։ Խաղացողը չի կարող «խաղից դուրս» դրությամբ լինել անկյունային հարվածի, դարպասից տրվող հարվածի ժամանակ, նույնպես և գնդակը կողքի գծի յետևից դաշտի ներսը նետելու ժամանակ, յեթե խաղացողը գտնվում է գնդակի յետևում կամ նրա հետ մի գծի վրա, յեթե գնդակին վերջին հարվածը տրվել է հակառակորդի կողմից և յեթե խաղացողը գտնվում է դաշտի իր կիսում։ «Խաղից դուրս» կանոնը ուժի մեջ է բոլոր ազատ, տուգանային և տասնմետր մետրանոց հարվածների ժամանակ։

8. Դ. Դատավորն իրավունք չունի սուլիչ տալ և խաղը կանգնեցնել միմիայն նրա համար, վոր խաղացողը գտնվում է «խաղից դուրս» դրությամբ։ Դատավորը պետք է ուշադրություն

դարձնի վոչ թե այն դրությանը, վորի մեջ է գտնվում խաղացողը, յերբ նա ընդունում է գնդակը, այլ նրան, թե նա ինչ դրության մեջ է յեղել, յերբ գնդակը տրվել է նրան։ Դատավորը պետք է հիշի, վոր գնդակին ձեռք տվող խաղացողի խմբի բոլոր խաղացողները կարող են «խաղից դուրս» լինել, յեթե նրանք գտնվում են գնդակի գծի առջևում գնդակին հարված տալու մոմենտին և չեն կարող «խաղից դուրս» լինել, յեթե նրանք գտնվում են գնդակի յետևում կամ նրա հետ մի գծի վրա։ Հետևապես՝ 1) խաղացողը միշտ «խաղից դուրս» կլինի, յեթե նա գտնվում է գնդակի գծի առջևում գնդակի և նրա խմբի մյուս խաղացողի հարված տալու մոմենտին, յեթե միայն նա իր առջևում յերկու հակառակորդ չունի, վորոնք ճակատի գծին նրանից ավելի մոտ լինեն. 2) խաղացողը «խաղից դուրս» չի համարվում, յեթե նույն պայմաններում նա իր առջևում յերկու հակառակորդ ունի, վորոնք ճակատի գծին ավելի մոտ են գտնվում, քան ինքը. 3) խաղացողը «խաղից դուրս» չի համարվում, յեթե գնդակը դիպել է հակառակորդին կամ նրա խմբի խաղացողին, վոր գտնվում է հակառակորդի ճակատի գծին ավելի մոտ, քան ինքը։

Յեթե խաղացողն իր խաղակցի (իր խմբի խաղացողի) հարվածի ժամանակ ճիշտ է կանգնած յեղել, իսկ հարվածից հետո դուրս է վազել դեպի առաջ և ընդունել է գնդակը, առանց իրեն առջևում յերկու խաղացող ունենալու, այդ սխալ չէ, բայց յեթե խաղացողն իր խաղակցի հարվածի

ժամանակ «խաղից դուրս» դրությամբ է յեղե և գնդակը վերցնելու համար յետ գնալով, հանկարծ յերկու հակառակորդի առջև է ընկել, պետք է սուլիչ տալ, թեկուզ սուլիչի ժամանակ խաղացողը «խաղից դուրս» դրությամբ չլինի։ Այդ կանոնի վրա պետք է հատուկ ուշադրություն դարձնել անկյունից հարված տալու ժամանակ։ Անկյունի սեկտորից առաջին հարվածը տալուց հետո, վոչ մի խաղացող չի կարող «խաղից դուրս» լինել, բայց, յեթե գնդակը դարպասից մի քիչ հեռու յե ընկել ու նրան խփել է հարձակվողներից մեկը, դարպասի մոտ կանգնած մի շարք խաղացողներ կարող են «խաղից դուրս» ընկնել։ Գնդակի գծի վրա կամ այդ գծի յետևում գտնվող խաղացողը յերբեք չի կարող «խաղից դուրս» լինել։ Յեթե խաղացողը «խաղից դուրս» է գտնվում, բայց նրան տրվող գնդակը դիպչում է հակառակ խմբի խաղացողին, սուլիչ չպետք է տալ։ «Խաղից դուրս» գտնվող խաղացողը պատժվում է վոչ միայն այն ժամանակ, յերբ նա դիպչում է գնդակին, այլև այն ժամանակ, յերբ նա վորևե բանով խանգարում է իր հակառակորդներին։ Բոլոր ազատ, տուգանային և տասնըմեկ մետրանոց հարվածների ժամանակ «խաղից դուրս» կանոնն ուժի մեջ է։ Չի թույլատրվում «խաղից դուրս» գտնվող խաղացողին հրել, խփել և այլն։ Հարակայության շնորհիվ դաշտի սահմաններից դուրս վազած խաղացողը կարող է «խաղից դուրս» լինել, յեթե նա վորևե բանով խանգարի հակառակորդին, որինակ՝ դարպասի

ցանցի ներսը վազած և այնտեղ մնացած խաղացողը կարող է խանգարել դարպասապահին։ Յերբեք չպետք է սուլիչ տալ, յեթե խաղացողի «խաղից դուրս» դրությունն ազդեցություն չի ունենում խաղի ընթացքի վրա։ Յեթե խաղացողը «խաղից դուրս» է յեղել նրա խմբի մի ուրիշ խաղացողի հարվածի մոմենտին, և գնդակը նրա ստանալու մոմենտին հակառակորդները յետ են վազել դեպի իրենց ճակատի գիծը և նրանց հակառակորդների թիվը նրանց ու առաջին խաղացողի միջև յերկուսից պակաս չէ, պետք է սուլիչ տալ։

8. Խ. Խաղացողը «խաղից դուրս» է համարվում վոչ թե այն մոմենտին, յերբ նա խփում է գնդակին, այլ այն մոմենտին, յերբ նրանից առաջ գնդակին խփել է նրա խմբի խաղացողը։ Յեթե հարվածը տվել է հակառակորդը կամ փոխանցելու ժամանակ գնդակը դիպել է հակառակորդին, խաղացողը չի կարող «խաղից դուրս» լինել։ Յերբ հարվածն իր խմբի խաղացողն է տվել, խաղացողը չի կարող «խաղից դուրս» լինել հետևյալ դեպքերում. 1) յեթե նա յեղել է գնդակի յետևում կամ նրա հետ մի գծի վրա, 2) յեթե նա յեղել է դաշտի իր կիսում, 3) յեթե նրա առջևում յերկու հակառակորդ կա։ Խաղացողը չի կարող ինքն իրեն խաղի մեջ մտնել և, յեթե նա «խաղից դուրս» է յեղել, կարող է խաղի մեջ մտած համարվել, յեթե միայն՝ 1) գնդակը խփել է հակառակորդը կամ գնդակը դիպել է հակառակորդին, 2) գնդակը խփել է իր խաղացողը, վորը

հակառակորդի դարպասին ավելի մոտ է գտնվում, քան ինքը, 3) եթե նրա ու հակառակորդի ճակատի գծի միջև խաղի հետագա ընթացքում հակառակորդի յերկու խաղացող են ընկել։

20. ԿՈՊԻՏ ԽԱՂ

Արգելվում է խաղացողին ձեռքերով կամ վոտներով խփելը. արգելվում է խաղացողին վոտ տալը ու հակառակորդին վայր գցելու ձգտումը, գործադրելով ձեռքերը, վոտքերը, նրա առջևում կամ յետևում կռանալով։ Արգելվում է խաղացողի վրա ցատկելը ու առհասարակ այնպիսի ձևեր գործադրելը, վորոնք կարող են խաղացողին ֆիզիկական վնաս հասցնել. թույլատրվում է խանգարել հակառակորդին, նրա ճանապարհը կտրելով, յերբ նա վազում է դեպի գնդակը, կարելի յե նրա առջևում յետ ու առաջ վազել ու նրա ճանապարհը փակել, այդ դեպքում առանց ձեռք տալու։

8. Դ. Դատավորը պետք է արմատախիլ անի կոպիտ խաղի փորձերը, կանգ չառնելով ազդեցության վոչ մի միջոցի առաջ։ Պատժվում են միմիայն կանոնների դիտավորյալ խախտումները։

8. Ե. Ամբակները պատասխանատվություն են կրում իրենց խաղացողների համար, ուստի պետք է թույլ չտան կոպիտ խաղացողներին խաղին մասնակցելու, հիշելով, վոր մեկ խաղացողի կոպտությունը կարող է ամբողջ խմբի պարտությանը հասցնել։

21. ՁԵՌՔԵՐՈՎ ԽԱՂԱԼԸ

Բացի դարպասապահից, յերբ նա գտնվում է իր տուգանային մակերեսի սահմաններում, վոչ վոք չի կարող դիտավորյալ կերպով գնդակին ձեռքերով դիպչել, մինչև վոր գնդակը խաղի մեջ է գտնվում։

8. Դ. Պատժվում է միմիայն դիտավորյալ կերպով գնդակին ձեռք տալը. եթե գնդակը պատահաբար ձեռքն է ընկել, այդ սխալ չէ։

8. Ե. Անհրաժեշտ է հիշել, վոր դատավորը պատժում է միմիայն դիտավորյալ կերպով գնդակին ձեռք տալը։ Դիտավորության վորոշումը դատավորի իրավունքն է։

22. ՀՐՈՒՄՆԵՐ

Թույլատրվում է հակառակորդին հրել միայն այն ժամանակ, յերբ նա անմիջապես մոտիկ է գտնվում գնդակին, ըստ վորում հրումները չպետք է կոպիտ ու վտանգավոր լինեն։ Արգելվում է հակառակորդին ձեռքերով հրել և առհասարակ հակառակորդին խանգարել խաղալու՝ մարմնից հեռացրած ձեռքի վորևե մասով։ Արգելվում է հակառակորդի մեջքին հրել, եթե նա դիտավորյալ կերպով չի խանգարում խաղացողին, ըստ վորում, եթե խաղացողը յերեսը դարձնում է դեպի իր դարպասը, իմանալով, վոր նրա վրա հարձակվում են, այդ համարվում է, վոր նա հակառակորդին խանգարում է։

8. Դ. Հրել կարելի յե միմիայն կրծքով և ուսով, ըստ վորում ձեռքը պետք է մարմնին սեղ-

հակառակորդի դարպասին ավելի մոտ է գտնվում, քան ինքը, 3) յեթե նրա ու հակառակորդի ճակատի գծի միջև խաղի հետագա ընթացքում հակառակորդի յերկու խաղացող են ընկել։

20. ԿՈՊԻՏ ԽԱՂ

Արգելվում է խաղացողին ձեռքերով կամ վոտներով խփելը. արգելվում է խաղացողին վոտ տալը ու հակառակորդին վայր գցելու ձգտումը, գործադրելով ձեռքերը, վոտքերը, նրա առջևում կամ յետևում կանգնելով։ Արգելվում է խաղացողի վրա ցատկելը ու առհասարակ այնպիսի ձևեր գործադրելը, վորոնք կարող են խաղացողին ֆիզիկական վնաս հասցնել. Թույլատրվում է խանգարել հակառակորդին, նրա ճանապարհը կտրելով, յերբ նա վազում է դեպի գնդակը, կարելի յե նրա առջևում յետ ու առաջ վազել ու նրա ճանապարհը փակել, այդ դեպքում առանց ձեռք տալու։

8. Դ. Դատավորը պետք է արմատախիլ անի կոպիտ խաղի փորձերը, կանգ չառնելով ազդեցության վոչ մի միջոցի առաջ։ Պատժվում են միմիայն կանոնների դիտավորյալ խախտումները։

8. Խ. Խմբակները պատասխանատվություն են կրում իրենց խաղացողների համար, ուստի պետք է թույլ չտան կոպիտ խաղացողներին խաղին մասնակցելու, հիշելով, վոր մեկ խաղացողի կոպտությունը կարող է ամբողջ խմբի պարտությանը հասցնել։

21. ՁԵՌՔԵՐՈՎ ԽԱՂԱԼԸ

Բացի դարպասապահից, յերբ նա գտնվում է իր տուգանային մակերեսի սահմաններում, վոչ վոք չի կարող դիտավորյալ կերպով գնդակին ձեռքերով դիպչել, մինչև վոր գնդակը խաղի մեջ է գտնվում։

8. Դ. Պատժվում է միմիայն դիտավորյալ կերպով գնդակին ձեռք տալը. յեթե գնդակը պատահաբար ձեռքն է ընկել, այդ սխալ չէ։

8. Խ. Անհրաժեշտ է հիշել, վոր դատավորը պատժում է միմիայն դիտավորյալ կերպով գնդակին ձեռք տալը։ Դիտավորության վորոշումը դատավորի իրավունքն է։

22. ՀՐՈՒՄՆԵՐ

Թույլատրվում է հակառակորդին հրել միայն այն ժամանակ, յերբ նա անմիջապես մոտիկ է գտնվում գնդակին, ըստ վորում հրումները չպետք է կոպիտ ու վտանգավոր լինեն։ Արգելվում է հակառակորդին ձեռքերով հրել և առհասարակ հակառակորդին խանգարել խաղալու՝ մարմնից հեռացրած ձեռքի վորևե մասով։ Արգելվում է հակառակորդի մեջքին հրել, յեթե նա դիտավորյալ կերպով չի խանգարում խաղացողին, ըստ վորում, յեթե խաղացողը յերեսը դարձնում է դեպի իր դարպասը, իմանալով, վոր նրա վրա հարձակվում են, այդ համարվում է, վոր նա հակառակորդին խանգարում է։

8. Դ. Հրել կարելի յե միմիայն կրծքով և ուսով, ըստ վորում ձեռքը պետք է մարմնին սեղ-

մած լինի։ Պետք է պատժել միմիայն կանոնների դիտավորյալ խախտումները։

8. Խ. Հարձակումը յերբեք կոպիտ չպիտի լինի։ Խաղացողը չպետք է իր կոպտությունն արդարացնի նրանով, որ նա գնալիս է յեղել դեպի գնդակը։

23. ԴԱՐՊԱՍԱՊԱՀԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Դարպասապահն իր տուգանային մակերեսի սահմաններում կարող է ոգտվել (խաղալ) ձեռքերով, բայց իրավունք չունի գնդակը ձեռքին կամ նրան ոդի մեջ վեր ձգելով յերկու քայլից ավելի անի։

8. Դ. Դարպասապահը գնդակը ձեռքին յերրորդ քայլն անելիս, դատավորը պետք է սուլի։

24. ՀԱՐՁԱԿՈՒՄ ԴԱՐՊԱՍԱՊԱՀԻ ՎՐԱ

Դարպասապահի վրա կարելի յե հարձակվել, յեթե նա դուրս է յեկել իր դարպասի մակերեսի սահմաններից։ Դարպասի մակերեսի սահմաններում դարպասապահի վրա կարելի յե հարձակվել միմիայն այն ժամանակ, յերբ նա դիպչում է գնդակին կամ դիտավորյալ կերպով հակառակորդին խանգարում է խաղալու, ըստ վորում հարձակումը կոպիտ չպիտի լինի։

8. Դ. Դարպասապահի վրա հարձակում կատարելուն պետք է հատկապես ուշադրությամբ վերաբերվել, վորովհետև նա գրեթե վոչ մի հնարավորություն չունի պաշտպանվելու։

8. Խ. Դարպասապահը պետք է վորքան հնարավոր է շուտով ձեռքից տա գնդակը, վորպեսզի չենթարկվի հարձակման։

25. ԴԱՐՊԱՍԱՊԱՀԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ

Դարպասապահին խաղի ժամանակ կարելի յե փոխարինել մի ուրիշ խաղացողով, բայց այդ մասին պետք է նախապես հայտնված լինի դատավորին։ Իսկ յեթե դարպասապահը փոխվել է առանց դատավորին հայտնելու, և նոր դարպասապահը ձեռքով վերցրել է գնդակը, այդ դիտավորյալ կերպով ձեռքով խաղալ է համարվում։

8. Դ. Դատավորը պետք է նկատի, թե խաղի սկզբում ով է դարպասապահ կանգնել։

8. Խ. Զմոռանաք դատավորին զգուշացնել դարպասապահին փոխարինելու մասին։

26. ԱԶԱՏ ՀԱՐՎԱԾ

Կանոնների 15, 16, 17, 18, 19, 23, 26, 27 և 28 կետերը խախտելու դեպքում, դատավորը մեղավորների հակառակորդներին «ազատ հարված» է հատկացնում, վորը տեղի յե ունենում ներքոհիշյալի համաձայն. գնդակը դրվում է դաշտի այն կետում, վորտեղ տեղի յե ունեցել կանոնների խախտումը, ազատ հարված տվող խմբի հակառակորդներն իրավունք չունեն գընդակին 9 մետրից ավելի մոտենալ մինչև գնդակին հարված տալը, ըստ վորում, յեթե ազատ հարվածը տրվում է ճակատի գծից 9 մետրից պակաս հեռավորության վրա, պաշտպանվող խմբի խաղացողները կարող են կանգնել իրենց ճակատի գծի կամ դարպա-

սի գծի վրա։ Գնդակը խաղի մեջ է համարվում միմիայն այն ժամանակ, երբ նա մի լրիվ պտույտ անի կամ թռչի այն հեռավորությունը, որը հավասար է գնդակի շրջագծի երկարությանը։ Խաղացողը գնդակին հարված է տալիս դատավորի սուլիչից հետո ամեն մի ցանկացած ուղղությամբ և իրավունք չունի կրկին անգամ գնդակին դիպչել, մինչև որ մի ուրիշ խաղացող գնդակին չդիպչի։ Ազատ հարվածից անմիջապես դարպասի միջով անցած գնդակը հաշվի չի առնվում։ Ազատ հարվածը տրվում է կանոնների խախտման տեղից անկախ, ըստ որում այդպիսին որոշում և ցույց է տալիս դատավորը։

8. Դ. Դատավորը կարող է ազատ հարված նշանակել այն բոլոր դեպքերում, երբ խաղացողի վարքը, նրա կարծիքով, վտանգավոր է կամ կարող է վտանգավոր դառնալ, բայց այնքան էլ անկանոն չէ ավելի խիստ միջոցներ ձեռք առնելու համար. վտանգավոր խաղի համար ազատ հարված նշանակելու ժամանակ դատավորը մեղավոր խաղացողին ցույց է տալիս։ Դատավորը չպետք է ազատ հարված նշանակի, եթե այդ առավելություն է տալիս մեղավոր խմբին։ Դատավորը սուլիչ է տալիս հարված տալու համար։

8. Ե. Հարվածը տեղի չի ունենում դատավորի սուլիչով։

27. ՏՈՒԳԱՆԱՅԻՆ ՀԱՐՎԱԾ

Կանոնների 20, 21, 22 և 24 կետերը սեփական տուգանային մակերեսի սահմաններից դուրս խախտելու

դեպքում, դատավորը մեղավորի հակառակորդներին «տուգանային հարված» է նշանակում այն տեղից, որտեղ տեղի չի ունեցել կանոնների խախտումը։ Խաղացողների դասավորությունը, գնդակը խաղի մեջ մտցնելը, տուգանային հարված տվողի իրավունքները ու դատավորի աշդանշանը նույնն են, ինչ որ ազատ հարվածի ժամանակ։ Տուգանային հարվածից անմիջապես դարպասն անցած գնդակը հաշվի չի առնվում։ Տուգանային հարվածը կարելի չէ նշանակել միայն այն ժամանակ, երբ գնդակը խաղի մեջ է գտնվում և եթե կանոնների խախտումը տեղի չի ունեցել սեփական տուգանային մակերեսի սահմաններից դուրս, կանոնների խախտման տեղը որոշում ու ցույց է տալիս դատավորը։

8. Դ. Տուգանային հարվածով պատժվում է միմիայն կանոնների դիտավորյալ խախտումը։ Դատավորը չպետք է տուգանային հարված նշանակի, եթե այդ ձեռնտու չէ մեղավոր խմբին։ Դատավորը սուլիչ է տալիս հարված տալու համար։

8. Ե. Տուգանային հարվածը տրվում է դատավորի սուլիչով։

28. ՏԱՍՆՄԵԿ ՄԵՏՐԱՆՈՑ ՀԱՐՎԱԾ

Կանոնների 20, 21, 22 և 25 կետերը սեփական տուգանային մակերեսի սահմաններում խախտելու դեպքում, դատավորը մեղավորի հակառակորդներին 11 մետրանոց հարված է նշանակում, որը տրվում է այդպիսի հարվածի համար նշանակած տեղից, պահպանելով հետևյալ պայմանները։

Բոլոր խաղացողները, բացի 11 մետրանոց հարվածը տվողից ու հարվածն ընդունող դարպասապահից, պետք է տուգանային մակերեսի սահմաններից դուրս գտնվեն, ըստ վորում դարպասապահը չպետք է դուրս գա դաշտը դարպասի գծի առջևում։ Գնդակը պետք է խփել դեպի առաջ, ըստ վորում նա խաղի մեջ է մնում միայն այն ժամանակ, յերբ նրան հարված է տված. այդպիսի հարվածից անմիջապես դարպասն անցած գնդակը հաշվի յե առնվում։ 11 մետրանոց հարված տվողն իրավունք չունի կրկին անգամ գընդակին դիպչել, մինչև վոր մի ուրիշ խաղացող նրան չդիպչի։ Խաղի ժամանակը պետք է յերկարացնել 11 մետրանոց հարված տալու համար, ըստ վորում, յեթե խաղը շարունակվել է 11 մետրանոց հարված տալու համար, դարպասը վերցված է համարվում, յեթե գընդակն անցել է դարպասով, թեկուզ և դարպասապահը նրան դիպած լինի։ Յեթե 11 մետրանոց հարվածի ժամանակ գնդակն անցել է դարպասով, նրան պետք է հաշվի առնել, յեթե նույնիսկ պաշտպանվող խումբը թույլ է տվել այդ ժամանակ կանոնների վորևե խախտում։ 11 մետրանոց հարվածը սխալ տալու դեպքում հարվածը կրկնվում է, բայց կրկնությունը վոչ մի ձեռնտու հետևանքներ չպիտի ունենա մեղավոր խմբի համար։ 11 մետրանոց հարվածը կարելի յե նշանակել միմիայն այն ժամանակ, յերբ գնդակը խաղի մեջ է գտնվում, անկախ գնդակի դրությունից կանոնների խախտման մոմենտում։

8. Դ. Յեթե խաղացողը խախտում է կանոնը «խաղից դուրս» գտնվող խաղացողի վերաբերյալ, 11 մետրանոց հարվածը պետք է նշանակել։ 11 մետրանոց հարվածը նշանակվում է կանոններն անպայման դիտավորյալ կերպով խախտելու դեպքում։

11 մետրանոց հարվածը մեղավորին չի ազատում այլ պատիժներից։ Յեթե 11 մետրանոց հարվածի ժամանակ կանոնը խախտել է հարձակվող խումբը ու գնդակն անցել է դարպասով, հարվածը կրկնվում է. յեթե գնդակը դարպասը չի մտել, հարվածը տեղի ունեցած է համարվում. իսկ յեթե կանոնը խախտել է պաշտպանվող խումբը և գնդակը դարպասի մեջն է մտել, հարվածը տեղի ունեցած է համարվում. յեթե գնդակը դարպասը չի մտել, հարվածը կրկնվում է։

8. Խ. Անհրաժեշտ է նշանակել 11 մետրանոց հարվածի կետը։ Խաղացողները չպետք է անցնեն տուգանային մակերեսի սահմանները, մինչև վոր հարվածը տրված չլինի։

29. ԴԱՏԱՎՈՐ

Յուրաքանչյուր խաղում պետք է դատավոր լինի, վորը հետևում է կանոնները կատարելուն և լուծում է բոլոր վիճելի հարցերը. նրա վճիռները խաղի հետ կապված բոլոր փաստերի մասին վերջնական են հետևանքի նկատմամբ։ Դատավորը հետևում է ժամանակին և խաղի մասին հաշվետվություն է կազմում։ Յեթե խաղացողներից մեկն ու մեկը վոչ ընկերական վերաբերմունք է ցույց տալիս, դատավորը մեղավորին նախազգուշացում է անում, իսկ կրկնվելու դեպքում, նույնպես և կոպիտ վերաբերմունքի դեպքում,

դատավորն իրավունք ունի մեղավորին դաշտից հեռացնել նույնիսկ առանց նախազգուշացման. այդ մասին նա պետք է հայտնի համապատասխան որդանին։ Դատավորը կարող է խաղը դադարեցնել իր հայեցողությամբ մութն ընկնելու, խաղացողների վտանգավոր վարմունքի, հանդիսականների միջամտության դեպքում և այն բոլոր դեպքերում, երբ դատավորը տեսնում է, որ առողջ ֆիզիկական մրցակցությունը— խաղը կորցնում է իր նշանակությունը։ Դատավորը կարող է խաղը շարունակել, եթե խաղն ընդհատված է յեղել դժբախտ պատահարի հետևանքով կամ որևե այլ պատճառով։ Այն բոլոր դեպքերում, երբ խաղը դադարեցված է յեղել կամ խաղացողներին որևե պատիժ է տրված յեղել, դատավորը հայտնում է համապատասխան որդանին, տեղի ունեցածի մասին մտցնելով խաղի արձանագրության մեջ։

Դատավորը պետք է հաշվի առնի այն ժամանակը, որը կորել է պատահաբար, նույնպես և դժբախտ պատահարի պատճառով։ Եթե խաղի ժամանակ որևե խաղացող ջնասվածք է ստանում, խաղն ընդհատվում է. ջնասվածին անմիջապես պետք է դուրս տանել կողքի կամ ճակատի գծի յետևը, որից հետո խաղը պետք է վերսկսել։ Գնդակը խաղի մեջ է համարվում մինչև որ դատավորը սուլիչ չտա։ Դատավորը չի կարող իր վճիռը փոխել խաղը վերսկսելուց հետո։ Դատավորի վճռին յենթակա յեն նաև կանոնների այն խախտումները, որոնք տեղի յեն ունեցել խաղի ընդհատման ժամանակ կամ այն ժամանակ, երբ գնդակը խաղից դուրս է յեղել։

Խաղի կանոնների սիստեմատիկ դիտավորյալ խախտումը վոչ ընկերական վերաբերմունք է համարվում այդ կանոնի իմաստով։

Դատավորը պետք է հետևի, որ ազատ և տուգանային հարվածները, գնդակի ներս նետումը, դարպասից և անկյունից տրվող հարվածները, սկզբնական հարվածը և 11 մետրանոց հարվածները կանոնավոր կերպով տրվեն։ Դատավորի նկատմամբ բոլոր գործողությունները, որ տեղի յեն ունեցել դաշտից դուրս, համարվում են դաշտում կատարված։ Դատավորի հասցեով կոպիտ և վոչ քաղաքավարի արտահայտությունները կոպիտ վարմունք են համարվում սույն կանոնի իմաստով։

8. Դ. Դատավորը լուծում է բոլոր հարցերը խաղի ժամանակ, գծերի վրայի դատավորներն ոգնում են նրան այդ գործում և ամբողջովին յենթարկվում են նրան։ Կոպիտ խաղի վերաբերյալ դատավորին վերապահվում են բոլոր իրավունքները։ Եթե դատավորը գտնում է, որ խաղացողներից մեկնումեկի վարմունքը կարող է միայն վտանգավոր դառնալ, նա արդեն կարող է խաղը կանգնեցնել և ազատ հարված նշանակել, միաժամանակ նախազգուշացում անելով մեղավոր խաղացողին. եթե խաղացողը կրկին անգամ նկատվի նույն բանում, նրան կարելի է դաշտից հեռացնել։

Նույնը կատարվում է վոչ սպորտական խաղի դեպքում, իսկ խաղացողների, հասարակության կամ դատավորի վերաբերմամբ կոպիտ վարմունքի դեպքում նախազգուշացում չի պահանջվում։

Ամեն անգամ պատիժ տալու մասին դատավորը հայտնում է համապատասխան որդանին։

Դատավորը պետք է խուսափի հետևյալից։ 1) դաշտում խաղացողների, խմբակների ներկայացուցիչների և մյուս շրջապատող անձնավորությունների հետ վիճելուց ու կռվելուց. 2) նրանց հետ կամ մամուլի ներկայացուցիչների հետ դաշտից դուրս վեճի և կռվի բռնվելուց. 3) ձեռքով դիպչելուց այն խաղացողին, որին պատիժ է տրվում, կամ նրա հասցեին որևե շարժումներ անելուց։

Դատավորը խաղն սկսելուց առաջ և ընդհատման ժամանակ պետք է ստուգի իր ժամացույցը գծերի վրայի դատավորների ժամացույցների հետ։ Հանձնարարվում է գրի առնել դարպասները մտցրած գնդակների թիվը և խաղն սկսելու ժամանակը։

8. Խ. Յեթե հասարակությունն սկսում է աղմուկ բարձրացնել դատավորի հասցեին, անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել, որպեսզի նա անվտանգ լինի թե խաղի ժամանակ և թե խաղից հետո, հիշելով, որ դատավորի անձեռնմխելիության համար ամբողջ պատասխանատվությունն ընկնում է խմբակի վրա։ Բոլոր խմբակներում անհրաժեշտ է պլակատներ կախել, որոնց մեջ պետք է բացատրել, թե դատավորի դերը և թե խաղից դուրս հանելու սպառնալիքը դատավորին վիրավորելու դեպքում։ Դատավորի վճռի դեմ կարելի չէ բողոքել միայն այն ժամանակ, երբ կարելի է վերականգնել որոշ փաստը առանց վկաների։ Այսպես, որինակ, չի կարելի բողոքել, յեթե դատավորը համարել է գընդակը դարպասի մեջ մտցրած այն ժամանակ, երբ «խաղից դուրս» դրություն է յեղել, բայց կարելի է բողոքել, յեթե դատավորը հաշվել է գնդակը ներս խփած անմիջապես ազատ հարվածից։ Ցուրաքանչյուր խմբակում պետք է պահունի սուլիչ ունենալ ուժեղ և զիլ հնչյունակ։

Խաղացողներին արգելվում է դաշտում վորևե խոսակցություն ունենալ դատավորի հետ։ Խմբի կապիտանը կարող է դատավորին հաղորդել այս կամ այն խնդիրքը, նույնպես և հարցնել դատավորի վճռի պատճառների մասին, բայց յերբեք չպետք է վիճաբանություն բռնկի և հավանության կամ անբավականության նշաններ ցույց տա։

Խաղացողները պետք է հիշեն, վոր դատավորին վիրավորելը ամենախայտառակ վարմունք է համարվում։ Խաղացողները միշտ պետք է դատավորին պաշտպան կանգնեն։ Խաղացողները չպետք է խաղը դադարեցնեն, մինչև վոր դատավորը սուլիչ չտա։

Խաղացողները դատավորի բոլոր կարգադրությունները պետք է կատարեն առանց առարկության։

30. ԳԾԵՐԻ ՎՐԱՑԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ

Ցուրաքանչյուր խաղում գծերի վրա յերկու դատավոր պիտի լինեն։ Նրանք չեն կարող ինքնուրույն

կերպով վճիռներ կայացնել ու յենթարկվում են դատավորին։ Նրանք պարտավոր են հետևել՝ լերբ և գընդակը խաղից դուրս յեկել, վոր խմբին պետք է իրավունք տալ գնդակը ներս նետելու կողքի գծի յետևից կամ հարված տալու անկյունից, նույնպես և ոգնում են դատավորին խաղը վարելու կանոնների համեմատ և խաղի ժամանակին հետևելու։ Դատավորն իրավունք ունի դաշտից հեռացնել գծի վրայի դատավորին և նրան տեղակալ նշանակել, յեթե գծի վրայի դատավորը խաղին ավելորդ միջամտություն է ունենում և իրեն պահում է վոչ պատշաճ կերպով։ այդ մասին դատավորը պետք է հաղորդի համապատասխան որդանին։

Գծերի վրայի դատավորները կարող են դատավորին մատնանշել խաղացողների կոպիտ վարմունքի մասին և առհասարակ ոգնել դատավորին խաղը վարելու, իրավունք ունենալով դատավորի ուշադրությունը դարձնել կանոնների այն խախտումների վրա, վորոնց դատավորը կարող եր չտեսնել։

8. Դ. Գծի վրայի դատավորը պետք է վորոշակի կերպով դրոշակը բարձրացնի, հենց վոր գնդակը գծի յետեվն անցնի, ցույց տա այն տեղը, վորտեղից գնդակը խաղի մեջ է մտցված և անվանել այն խումբը, վորն իրավունք ունի գընդակը ներս նետել կողքի գծի յետևից կամ նրան հարված տալ դարպասից կամ անկյունից։ Գծի վրայի դատավորը պետք է դատավորի ուշադրությունը դարձնի խաղացողների կոպիտ խաղի և վոչ ընկերական վարմունքի վրա, նույնպես և դատավորի հարցումով իր կարծիքը հայտնի այն

դեպքերի մասին, վորոնք դատավորին վիճելի յեն թվում։

8. Ե. Խմբակում պետք է դրոշակներ լինեն գծերի վրայի դատավորների համար։

Խաղացողները պետք է ուշադրություն դարձնեն դատավորի սուլիչին և վոչ թե գծի վրայի դատավորի դրոշակին, հիշելով, վոր դատավորը կարող է մի այլ վորոշում ընդունել, և վոչ թե այն, վոր առաջարկում է գծի վրայի դատավորը, յերբ դատավորն ինքը այլ կերպ է տեսնում։

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ZUUP
Ս. ՍՍԱՄՆԻԿՅԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0308795

9531

Գինը՝ 10 կոպ. (1¹/₂ մ.) մասն.

ФУТБОЛ

Официальные правила

Госиздат ССР Армении

Ереван, 1980 г.